

առօգ առեղծուածներէն մէկը կրնայ սեպ. ուիլ այս պարագան։ Բայց զարդանշաններու և մանրանկարներու արուեստին մանրաման քննութենէն այնպէս յայտնի կ'ըլլայ որ աւելի 18րդ դարու զրութիւն է քան թէ 16րդ դարու . որովհետեւ արզիական բացատրութեամբ սպառուապատ կամ դաստիան ազգեցութիւն մը կը կրեն մանրանկարները և գէմքերուն արտայատութիւնները այնպէս ենթազրել կուտան թէ ձաղկողը Եւրոպական ազգեցութիւն կրած է զօրաւոր կերպով։



Հայկական Զարդանկար Խորան

Կ'արտազրենք ձեռազրին ետել զրուած Ցիշտակարանը նոյնութեամբ։

Ա Այս աւետարանիս պակասութիւնքն լրնեցաւ . համարաբառքն և խորանքն ձեռամբ սերաստացի տիրացու բարսեղին և տիրացու յակորին, և արդեալք տիրացու ներսէսին . որք տեսանէք տուք զողորմին մեզ և ծնողաց մերոց . և գուք լիշեալ լիշք Այ, Ամէն, ԹօՇ։»

ԶԱԻԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Աղեքաններիս

ՆԱՐԵԿԱՑՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Բ) — «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ»

Այսպիսի հոգեկան ծանր զրութիւնների մէջ բանաստեղծին մնում է մեղայ տոելով թիթեացնել յուսահատութեան ծանրութիւնը . և աօրնեալու է համարում իր Աղբերգութեան Մատեան»ի սմեղային հատուածները . որոնք նրա կարծիքով կարող են սրտերին յոյսեր ներշնչել Այսպէս է խորհրդածում Նարեկացին, և կարծէք թէ ինքը զրանից հոգեպէս թիթեանում է ու հանգստանում . Բայց աւելի մեծ յուսագրութիւն և անզորրութիւն է նրան պատճառում Քրիստոսը . որը . ըստ հեղինակի . առհասարակ ողորմում է բոլոր նրանց . որոնք բաց արձակապէս իրենց փրրկութեան յոյսը զնում են նրա վրայ . Առաջի բանաստեղծը զիմում է Քրիստոսին, որ սա պէճնազէն խաչի սուսերով կտրի իրեն չորս կողմից մահացու կերպով պաշարող վարժի ցանցը . իր անձին զիւր ու անզորր տայ և վերագարձնի հոգու այն մաքուր անարատութիւնը . որ ինքն ունեցել է նոր սուսեղծուած ժամանակ։

Բայց . այնուամենայնիւ . բանաստեղծին սկսում է համակել մի սոսկալի տազնապ . Այս անզամ նա շտապում է . Ակում է արագ-արագ ներբոզել Աստծուն և Քրիստոսին և աղաչանքներով հեղեղել , սակայն ի զուրք . մօտենում է վերջապէս հանգուցալուծումը . Ահա՞ նրա աչքի տռաջ է զալիս իր հնարաւոր մահուան սոսկալի ուրուականը . Հիմա հս . «ամբարիչոնների զըլիսաւորս , տում է նա , ամահուան մըուըլ փսխեցի»։

«Աղբերգութեան Մատեան»ի բանաստեղծական ամենացնցող տեղերից է այն , ուր Նարեկացին իրեն՝ որպէս մեռածի քստմիցցուցիչ պատկերն է գծում .

Յորժամ , որ այժմ բանապանոյն խրոխաւ Սիզացոյ բարձրապարանոց , [ձայն Անկեալ զնիմ դի անկենդան , Կարկեալ ի խօսից , կուսկանդեալ ձեռօֆ , Լեւլ անդամօֆ , խիւեալ ըրբամբ , Կափուցեալ աչօֆ , տախտակ անշարժուն , Կոնդ կիսոյրեաց , արձան անզզայ ,

Պատկեր անբարբառ, զոյուքիւն անշունչ, Աղոթմելի տեսիլ, տժաւելի կերպարան, Աղբալի օրինակ, եղիկելի գեմի, Արտասուելի նմանուրիւն, լոեցեալ լեզու, Յամանեալ խոս, բօրափեալ ծալիկ, Մորեալ գեղ, ժիջեալ լումբար, Գամարկ կօկորդ, խոպանցեալ սիրս, Աղիսեալ ազդարան, սպառեալ աղբիւրս, Հատեալ ծառ, սոցցեալ արմաս, [բայս, Թողեալ տուն, հնձեալ արս, սորախուզեալ Օսարացեալ բարեկամ, մոռացեալ պահես, Թաղեալ զարուրիւն, մերժեալ ատելի ... Եւ իբր զանպիտան առ ոն կոխեալ:

(Բան ՀՓ. - Բ.)

Տողերը զնալով զանում են չափազանց մռապ. իջնում է մի թանձր սև գիշեր և թւում է, թէ բանատեղծն արդէն խօսում է ահասարսուս խաւարում, ու նրա խուլ ձայնը լուսում է հոգապատեան շիրիմի վերարկութիւն միջից: Նրա աղաւանքները դառնում են չափից աւելի սրտակեղեք, նա փորձում է կառչել մի վերջին յոյսից: Նա խնդրում է, որ Քրիստոսը, իր աշխարհից մեկնելու պահին, չհեռանայ իրենից, և նրա գծերը չնիջուին իր վրայից, այլ բնակեն իր հետ գերեզմանի մէջ: Բանատեղծը ճգնում է հաւատացնել Քրիստոսին, որ իր քայլքայուած սակորներն անզամ, հոգի մէջ լուծուած մարմինն անզամ, անլուելի բարբառով կը շարունակեն նրան մատուցանել իր պատատանքը: Նա խնդրում է նրան, որ լոի գերեզմանի խոր անզունդներից հկած այդ պազատազին ձայնը և իր մեռած պատկերի գէմ սխ չպահի:

Սակայն այդ յօյսով գեռ որևէ չափով չմխիթարուած, մահուան պատկերին բնականաբար յաջորդում է աւելի զարհուրելին՝ վերջին անեղ դատաստանի պատկերը: այդ ժամանակ է, որ բանաստեղծի պատկերմամբ, երկինքը պիտի զալարուի և երկիրը պիտի գլորգայ ու սարսի իր հիմքերից և ուժգնորդն իրար բախուելուց թնգաձայն կործանուեն լեռները, վառուեն ու հալուեն քարերը, և մարդ պիտի ապրի անճողուարելի տագնապ, անընդհատ զող, անվերջանալի ատամնակրնում, երբ նրա համար փակուելու է գութը և արգելուելու է ուղորմութիւնը, այդ այն անեղ ժամանակն է, իրը.

Մածկուրիւնք գործոց հրապարակին եւ աներեւոյք կրից մեր յայտնին:

(Բան ՀՓ. - Բ.)

«Վայ ինձ, եօթն անգամ վայ», բացագանչում է նարեկացին այս ահարկու մտապատկերի հանգէպ: Բայց հենց այստեղ անչափ թանձրացած խաւարի միջից նրա հոգում ճառագայթում է շլացուցիչ միլոյս, որը փարատում է խաւարը: Հոգու այդ ամենամռայլ յուսահատական պահին, երբ սարսափի զգացմունքը հասնում է իր զագաթնակէտին, երբ գժոխքի տանջանքների տեսիլները քիչ է մնում, որ խոպան ընկնծն նրան, նա յիշում է Տիրամօրը և փրկուելու համար զիմում նրա միջնորդութեան.

Եւ արդ ի վերայ այսբանեաց յաւսահատուելու ահարկու սրաբեկուրեանց, [բիսեց Պակուցանողական սասկուրեանց ասուածագին ճային բարկուրեանց, Տագնապեալ ոգւով բախծուրեան ի սպառ, Ակաչեմ զեզ սուրբ Ասուածածին ...

(Բան Զ. - Ա.)

Արացես սօն ինձ բերկուրեան զօրն իմ Ողջացուցիչ երկանցն նեայի. [Տագնապի, Բարեխօսեան խնդրեա տպաշեա, Զի բա անհառելի մարդուրեանդ Եւ ահա զբանիդ նաւատամ զընդունելուրիւն:

(Բան Զ. - Ա.)

Ոյս ներբողից (որն իր ամրողջութեան մէջ հոյակապ է) և օժանդակութեան հայցումից յետոյ հանգարուում և խաղաղուում է բանատեղծի հոգին և այս անգամ վերջնականապէս: Տիրամայրը նրա մէջ վերապարփեցնում և ամրապնդում է փրկութեան հաւատը:

Ահա կարիլ մի կարին բումդ կուսուրեան Ցանձն իմ անձրեւեալ կենաց ինձ զօրէ.

(Բան Զ. - Ա.)

զեղեցիկի ամենասքանչելի զգացողութեամբ ու կեանքի ամենաբռուսն տենչանքով ասում է բանատեղծը:

Գիրքը մօտենում է իր վախճանին: Միքանի զլուխս առաջ նարեկացին ընթերցողներին նախազգուշացնում է զրա մասին:

Այսուհետեւ, շատ գիւրընթաց և կարճ-կարճ մնացած զլուխները յաջորդում են մէկը միւսին։ Փրկուելու հաւատը աւելի է հաստատուն դառնում քանաստեղծի մօտ, երբ նա առաքեալներին և հրեշտակներին գիմնեց յետոյ, նորից վերջին անգամ սկսում է ներբռողել ու զիմել Աստծուն և Քրիստոսին։ Արօգհետն այս համեստ կոտակը հասել է իր վերջաւորութեան, ասում է նա, «Ձոդ զրա հետ միասին դադարեն իմ մէջ և վախճան գտնեն չար սովորութիւնները»։

Այսպիսով, զրքի վերջում Նարեկացին գալիս է այն համոզման, որ իր կրած այդքան տանջանքները տուել են իրենց արդիւնքը, որ ինքը վերջապէս մաքրուել է բոլոր մեղքերից, գրա համար նոյնը նացանկանում է իր ընթերցողներին, ասելով՝ թէ իր Մատեանը բոլոր կարգացողները, լինեն աղայ թէ ծեր, թող անխտիր և հաւասարապէս իրենց մասը ընդունեն երաշութիւնից։

Նորից իջնում է գիշերը, բայց այս անգամ հանգարու, մեղմ և ոչ անարկու։ Բանաստեղծը արթուն է և հոկում է խաղաղուած հոգով։ Նա արդէն հաստատ հաւատացած է, որ չուտով ծագելու է վիրշկութեան լոյսը և անուշ հանգստով սպասում է զրան։ Բացւում է վարդակարմիր առաւօտը, ծագում է ժամուն կենսատուարել, և Նարեկացին մի սքանչելի ներբռողով՝ առ արե-Քրիստոսը վերջացնում է իր հանճարեղ «Ողբերգութեան Մատեանը»։

Արեգակն արդար, ճառագայթ օրինեալ, կուսոյ կերպարան, փափառ անձկութեան . . . Զօրեղ անպատճ, բարոյ բերկուրին, Յուսոյ տեսութիւն . . .

(Բան Դ. Վ. - Ա.)

Եկեղեցն զրութիւնի կամոզիդ

եւ պարզեւողիդ կենաց ամենից, Ծագեցի լոյսդ . . .

(Բան Դ. Վ. - Գ.)

III

Նարեկացու մօտ «մեղք», ամեղան-չականութիւն» հասկացողութիւնները շատ լայն նշանակութիւն և ընդգրկում ունեն, նա իրական աւխտահի իր դիմած բոլոր փախյացարքերութիւնները սովորաբար պատ-

կերում ու դրանց նկատմամբ իր վերաբեր-մունքն է դրանուում «մեղքի» եւ անմեղ-սականութեան» հակադրութեամբ։ Այսպի-սով, եթէ այդ կրօնական-միստիկական քողը վերջնենք և պոէմի էութեանը նա-յենք, ապա կը տեսնենք, որ Նարեկացին արտայացուել է բուն իրականութիւնից ծըն-ուած իր ապրումները, խոհերն ու զգաց-մունքները։ Բանաստեղծն իր այդ անձնա-կան ապրումների մէջ խորը հասարակական ընդհանրացումներ է կատարել, և ինքն էլ շատ պարզ զիտակցել ու պոէմում մի քանի տեղ յիշատակիլ է այդ հանգամանքը։ Նա իր անձնական վշտի, թախիծի և երջան-կութեան հասնելու հեռանկարի մէջ մարմ-նաւորել է իր ժամանակի հասարակութեան լայն խաչերի՝ յատկապէս զիւղացիութեան վիշտն ու թախիծը և լաւատեսութիւնը։ Վերջին հաշուով Նարեկացու ողբերգու-թիւնը իրականութեան լիրիկական արտա-ցոլում է հանդիսանում, մի բան, որ նախ և առաջ պայմանաւորում է նրա ստեղծա-գործութեան գեղարուեստական և ճանա-չողական արժեքը։

Ամենից առաջ այս միանգամայն ինք-նատիպ Մատեանում առաջին անգամ մեր զրականութեան մէջ յանձինս նրա լիրիկա-կան հերոսի ամենացայտուն ու ամենախոր պատկերացումն է գտել իրական մարդը, իր ներքին բարդ ապրումներով։ Մինչ զեռ շա-րականների բանաստեղծները ներկայացնում էին զերազանցապէս Աստծուն և Քրիստո-սին։ Նարեկացին ներկայացնում է զերա-ցանցապէս իրեն։ Նարեկացու ողբերգական ապրումները արդիւնք են նրա՝ մարդու և կեանքի նկատմամբ ունեցած ամենաջերմ սիրոյ։ Նարեկի բովանդակութեան համարեա ամրող ընթացքում յաճախ հակադրուում են մարդն ու Աստծուածը, բայց այդ չպէտք է այնպիսի կոպիտ սիսալ մեկնարանութեան ենթարկութիւն, ինչպէս մի շարք բանասէրների մօտ է պատահել, որ իրը թէ մարդն ու Աստծուածը հակադրելով՝ Նարեկացու մի-տումն է եղել առհասարակ ժխտել մարդ արարածին։ Իրօք, ճշմարտութիւնն այն է, որ նա ժխտում է մարդկային թերութիւններն ու արատները, թերութիւններ ու ա-րատներ ունեցող մարդուն։

(Շարտնակելի՝ 9)

Մ. Մկրտչյան